ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ N 5

«ՇՄՆ-ԳՀ-ԱՊՁԲ-20/06» ծածկագրով գնանշման հարցման գնահատող հանձնաժողովի նիստի

ք.Երևան **« 18 » « նոյեմբերի » 2019թ.**
ժամը 16:00

Մասնակցում էին՝

Գնման Պատասխանատու/ Գնահատման աշխատակազմի պատասխանատու (**ԳՊ/ԳԱՊ**)	Ռ.Զոբանյան
Գնման Պատասխանատու/ Գնահատման աշխատակազմ (**ԳՊ/ԳԱ**)	Մ.Այդինյան
Գնման Պատասխանատու/ Գնահատման աշխատակազմ (**ԳՊ/ԳԱ**)	Ա.Մխիթարյան
Գնման Պատասխանատու/ Բացման աշխատակազմ (**ԳՊ/ԲԱ**)	Գ.Գրիգորյան
Գնման Պատասխանատու/ Բացման աշխատակազմ (**ԳՊ/ԲԱ**)	Մ.Օհանջանյան
Գնման Պատասխանատու/ Մրցույթի համակարգող (**ԳՊ/ՄՀմ**)	Լ.Զոհրաբյան

1. «ՇՄՆ-ԳՀ-ԱՊՁԲ-20/06» ծածկագրով մրցույթի գնահատման արդյունքների ամփոփման նիստի անցկացման վայրը, օրը և ժամը.

(Ռ.Զոբանյան)

1.1. «ՇՄՆ-ԳՀ-ԱՊՁԲ-20/06» ծածկագրով մրցույթի մասնակիցների կողմից ներկայացված փաստաթղթերի գնահատման արդյունքների ամփոփման նիստը կայացել է 2019 թվականի նոյեմբերի 18-ին, ժամը 16:00-ին, Շրջակա միջավայրի նախարարության շենքում, ք.Երևան, Կառավարության 3շ., 5-րդ հարկ 514 սենյակ հասցեում:

Ընդունվել է որոշում՝ կողմ՝ 5, դեմ՝ 0:

2. «ՇՄՆ-ԳՀ-ԱՊՁԲ-20/06» ծածկագրով մրցույթի հրավերով սահմանված կարգով մասնակիցների վերաբերյալ ՀՀ կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտե հարցում ներկայացնելու և եզրակացությունը ստանալու վերաբերյալ տեղեկություններ.

2.1. «ՇՄՆ-ԳՀ-ԱՊՁԲ-20/06» ծածկագրով մրցույթի քարտուղարի կողմից 2019 թվականի նոյեմբերի 12-ին ՀՀ կառավարության 2017 թվականի մայիսի 4-ի N 526-Ն որոշման հավելված 1-ով հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման մասին» կարգի 43-րդ կետի 3-րդ ենթակետի համաձայն հարցում է ուղարկվել ՀՀ կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտե՝ առաջին տեղ զբաղեցրած մասնակցի՝ ՀՀ պետական բյուջեի նկատմամբ հայտը ներկայացնելու օրվա դրությամբ ժամկետանց հարկային պարտավորությունների վերաբերյալ: ՀՀ կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտե կողմից սահմանված ժամկետում ստացվել է եզրակացություն առ այն, որ «Մեծ Ծիածան» ՍՊ և «Առէա Պապիրուս» ՍՊ, «Մովսեսյան» ՍՊ և «Սմարթլայն» ՍՊ ընկերությունների ներկայացրած հայտարարությունները համարվում են իրականությանը համապատասխանող:

3. «ՇՄՆ-ԳՀ-ԱՊՁԲ-20/06» ծածկագրով մրցույթի 1-ին տեղ զբաղեցրած մասնակիցների կողմից որակավորման չափանիշներին համապատասխանությունը հիմնավորող փաստաթղթերի ներկայացման մասին

(Ռ.Զոբանյան)

3.1. 1-ին տեղ զբաղեցրած մասնակիցների կողմից Հրավերի 2-րդ մասի 3.1 կետով նախատեսված փաստաթղթերը էլեկտրոնային ձևով սահմանված ժամկետում ներկայացվել են Շրջակա միջավայրի նախարարության gnumner.mnp@yandex.ru էլեկտրոնային փոստի հասցեին:

Ընդունվել է որոշում՝ կողմ՝ 5, դեմ՝ 0:

4. Հանձնաժողովը որոշեց՝

Ռ.Զոբանյան

4.1. Հիմք ընդունելով գնահատող հանձնաժողովի անդամների կողմից ներկայացված գնահատման թերթիկները՝ չափաբաժիններ չափաբաժիններ 1, 3, 4, 5, 7, 8, 9, 10, 12, 13, 15, 16, 17, 18, 20, 21, 24, 25, 26, 27, 28, 29, 30, 31, 34, 35, 36 և 37-ով, հաղթող ճանաչել «Մեծ Ծիածան» ՍՊԸ-ին, չափաբաժին 6-ով՝ «Առէա Պապիրուս» ՍՊԸ-ին, չափաբաժին 11-ով «Մովսեսյան» ՍՊԸ-ին, չափաբաժիններ 14, 19, 22, 23, 32 և 33-ով՝ Սմարթլայն» ՍՊԸ-ին:

4.2. Պայմանագրի կնքման նպատակով «ՇՄՆ-ԳՀ-ԱՊՁԲ-20/06» ծածկագրով մրցույթի հաղթող ճանաչված մասնակցին՝ ծանուցել 10 աշխատանքային օրվա ընթացքում ներկայացնել պայմանագրի կատարման ապահովում տուժանքի ձևով՝ միակողմանի հաստատված հայտարարություն և վճարման պահանջագիր՝ կնքվելիք պայմանագրի գնի 10 տոկոսի չափով:

4.3. Հաստատել պայմանագիր կնքելու մասին որոշման հայտարարության տեքստը:

4.4. «Գնումների մասին» ՀՀ օրենքի 10-րդ հոդվածի 3-րդ կետի համաձայն՝ սահմանել անգործության ժամկետ՝ պայմանագիր կնքելու մասին որոշման հայտարարություն հրապարակվելու օրվան հաջորդող օրվանից մինչև 5-րդ օրացուցային օրը ներառյալ ընկած ժամանակահատվածը:

Ընդունվել է որոշում՝ կողմ՝ 5, դեմ՝ 0:

5. Նիստին ներկա հանձնաժողովի անդամների անունները և ազգանունները:

Գնման Պատասխանատու/
Գնահատման աշխատակազմի պատասխանատու (**ԳՊ/ԳԱՊ**) _____ Ռ.Զոբանյան

Գնման Պատասխանատու/
Գնահատման աշխատակազմ (**ԳՊ/ԳԱ**) _____ Մ.Այդինյան

Գնման Պատասխանատու/
Գնահատման աշխատակազմ (**ԳՊ/ԳԱ**) _____ Ա.Մխիթարյան

Գնման Պատասխանատու/
Բացման աշխատակազմ (**ԳՊ/ԲԱ**) _____ Գ.Գրիգորյան

Գնման Պատասխանատու/
Բացման աշխատակազմ (**ԳՊ/ԲԱ**) _____ Մ.Օհանջանյան

Գնման Պատասխանատու/
Մրցույթի համակարգող (**ԳՊ/ՄՀմ**) _____ Լ. Զոհրաբյան